



Այդ առավոտ շատ ցուրտ էր: Արևը վախից կծկվել ու սառել էր երկնքում: Գորշ թուխպերը աջ ու ձախ մտրակում էին իրենց ամպ-ձիերը, ու քամին հալածում էր ծառերից թափվող վերջին տերևներին: Մեծահասակները ասում էին, որ շուտով նոյեմբերը հրաժեշտ է տալու մեզ, և կասկածում էին, որ շուտով ձյուն է գալու: Մեծահասակները մշտապես անցնում են նույն կասկածների միջով, նրանք վախենում են խենթանալ, թեպետ ի սկզբանե քիչ թե շատ խենթ են, նրանք վախենում են կորցնել իրենց ծանոթ սահմանները, թեպետ այն, ինչ կարող են անել, միայն հետևելն է և ոչինչ՝ փոխելը: «Մենք այնպիսին ենք, ինչպիսին որ կանք, ընդունեք մեզ այսպես», - ասում են նրանք ու խաղաղվում՝ չկռահելով, որ դադարել են Տեսնել....

Արդեն մեկ ամիս էր, որ դեպի նորաճ, բազալտե սև հսկա որովայնները դուրս ցցած առանձնատները տանող փողոցի անկյունադարձում լսվում էին անօթևան ու ցրտահար ջութակի նվաղկոտ մեղեդիները:

Մարդիկ անցնում էին անտարբեր ասես ոչինչ չնկատելով, իսկ անտուն հնչյունները թափառում էին՝ ջերմություն որոնելով նրանց հոգիներում... այս առավոտը նույնպես նման էր մյուս առավոտներին՝ գորշ ու անտարբեր, անողոք ու հյուժված... այո°, միշտ է այդպես, մեզանից յուրաքանչյուրը ծնվում է թեթև ու թևավոր, սակայն ժամանակի ընթացքում կորցնում ենք մեր թևերը ու կառչում ենք հողից....

Նվագողը փոքրիկ աղջիկ էր՝ բոկոտն ու կիսամերկ, սովից ու ցրտից ուռած մատներով: Նա տարուբերում էր աղեղը ջութակի լարերին, ու ջութակն էլի նույն խռպոտ հնչյուններն էր արձակում՝ թոքախտավոր ու մոլոր:

Ոտքերի առջև դրված տուփը հսկա օվկիանոսում տարուբերվող նավակ էր հիշեցնում, որն անզորությունից չէր կարողանում շարժել վերջույթները:

Ոտքերն ուռել էին ու կապտել. աղջիկը ոչինչ չէր որոնում. ոչ կարեկցանք, ոչ օգնություն, ոչ գուրբ: Միակ բանը, որ կարող էր սփոփել նրան՝ ջութակն էր, թեպետ հայտնվում էին նաև ինչ-որ տեսիլներ անցյալից, այն ժամանակներից, երբ մայրը դեռ չէր մահացել, երբ ամեն երեկո, հավաքվելով ընթրիքի սեղանի շուրջը, սպասում էին հայրիկի վերադարձին, ու թեպետ երկաթե սառը շարժական տնակում էին, բայց մայրը գտնում էր ջերմացնող բառեր ... Հիշեց վերջին եղևինն, որ այդպես էլ մնաց չզարդարված, հիշեց վերջին աղոթքը, որ մայրն էր սովորեցրել, ու մրմնջաց այն՝ ցրիվ, ընդհատ բառերով.... Հիշեց, որ մի քանի օր առաջ այստեղ՝ նույն փակ շերտավարագույրներով տների անկյունում, իր հետ էին եղբայրն ու հայրը...

Այդպիսին ենք մենք. հիշում ենք այն ակնթարթները միայն, որ մեզ ուրախություն են պարգևել, հիշում ենք, հիշում, հիշում... Սակայն մեր ու աշխարհի միջև մշտապես աշխարհի

պատկերն է, ու քանի որ աշխարհը չի տրվում մեզ ոչ մի կերպ, այդ պատճառով մի քայլ հետ ենք մնում, ու մեր ուղեկիցը դառնում է հիշողությունը, մեն-միակ հիշողությունը... Ու երբ ավարտվում է մեր ու աշխարհի երկխոսությունը, ավերվում է աշխարհը, ու հայտնաբերում ենք մեզ անծանոթ սահմաններ, որոնք կարծես թաքնվել էին մեր բառերի իմաստներում... Աղջիկը շարունակում էր նվագել. միայն ինքն էր ու ջութակը՝ վշտահար ու տխուր: Նա նվագում էր, նվագում, նվագում, կարծես հավատում էր, որ մեզ շրջապատող աշխարհն ինքը հավերժությունն է... Այդ առավոտ շատ ցուրտ էր: Արևը վախից կծկվել ու սառել էր երկնքում: Գորշ թութակերը աջ ու ձախ մտրակում էին իրենց ամպ-ծիերը, ու քամին հալածում էր ծառերից թափվող վերջին տերևներին: Մեծահասակները ասում էին, որ շուտով նոյեմբերը հրաժեշտ է տալու մեզ, և կասկածում էին, որ շուտով ձյուն է գալու: Մեծահասակները մշտապես անցնում են նույն կասկածների միջով, նրանք վախենում են խենթանալ, թեպետ ի սկզբանե քիչ թե շատ խենթ են, նրանք վախենում են կորցնել իրենց ծանոթ սահմանները, թեպետ այն, ինչ կարող են անել, միայն հետևելն է և ոչինչ՝ փոխելը: "Մենք այնպիսին ենք, ինչպիսին որ կանք, ընդունեք մեզ այսպես", - ասում են նրանք ու խաղաղվում՝ չկռահելով, որ դադարել են Տեսնել....

Արդեն մեկ ամիս էր, որ դեպի նորաոճ, բազալտե սև հսկա որովայնները դուրս ցցած առանձնատները տանող փողոցի անկյունադարձում լսվում էին անօթևան ու ցրտահար ջութակի նվաղկոտ մեղեդիները:

Մարդիկ անցնում էին անտարբեր ասես ոչինչ չնկատելով, իսկ անտուն հնչյունները թափառում էին՝ ջերմություն որոնելով նրանց հոգիներում... այս առավոտը նույնպես նման էր մյուս առավոտներին՝ գորշ ու անտարբեր, անողոք ու հյուծված... այո°, միշտ է այդպես, մեզանից յուրաքանչյուրը ծնվում է թեթև ու թևավոր, սակայն ժամանակի ընթացքում կորցնում ենք մեր թևերը ու կառչում ենք հողից....

Նվագողը փոքրիկ աղջիկ էր՝ բոկոտն ու կիսամերկ, սովից ու ցրտից ուռած մատներով: Նա տարուբերում էր աղեղը ջութակի լարերին, ու ջութակն էլի նույն խռպոտ հնչյուններն էր արձակում՝ թոքախտավոր ու մոլոր:

Ոտքերի առջև դրված տուփը հսկա օվկիանոսում տարուբերվող նավակ էր հիշեցնում, որն անզորությունից չէր կարողանում շարժել վերջույթները:

Ոտքերն ուռել էին ու կապտել. աղջիկը ոչինչ չէր որոնում. ոչ կարեկցանք, ոչ օգնություն, ոչ գութ: Միակ բանը, որ կարող էր սփոփել նրան՝ ջութակն էր, թեպետ հայտնվում էին նաև ինչ-որ տեսիլներ անցյալից, այն ժամանակներից, երբ մայրը դեռ չէր մահացել, երբ ամեն երեկո, հավաքվելով ընթրիքի սեղանի շուրջը, սպասում էին հայրիկի վերադարձին, ու թեպետ երկաթե սառը շարժական տնակում էին, բայց մայրը գտնում էր ջերմացնող բառեր ... Հիշեց վերջին եղևինն, որ այդպես էլ մնաց չզարդարված, հիշեց վերջին աղոթքը, որ մայրն էր սովորեցրել, ու մրմնջաց այն՝ ցրիվ, ընդհատ բառերով.... Հիշեց, որ մի քանի օր առաջ այստեղ՝ նույն փակ շերտավարագույրներով տների անկյունում, իր հետ էին եղբայրն ու հայրը...

Այդպիսին ենք մենք. հիշում ենք այն ականաթները միայն, որ մեզ ուրախություն են պարգևել, հիշում ենք, հիշում, հիշում... Սակայն մեր ու աշխարհի միջև մշտապես աշխարհի պատկերն է, ու քանի որ աշխարհը չի տրվում մեզ ոչ մի կերպ, այդ պատճառով մի քայլ հետ ենք մնում, ու մեր ուղեկիցը դառնում է հիշողությունը, մեն-միակ հիշողությունը... Ու երբ ավարտվում է մեր ու աշխարհի երկխոսությունը, ավերվում է աշխարհը, ու հայտնաբերում ենք մեզ անծանոթ սահմաններ, որոնք կարծես թաքնվել էին մեր բառերի իմաստներում... Աղջիկը շարունակում էր նվագել. միայն ինքն էր ու ջութակը՝ վշտահար ու տխուր: Նա նվագում էր, նվագում, նվագում, կարծես հավատում էր, որ մեզ շրջապատող աշխարհն ինքը հավերժությունն է...

Երեկոյան դեմ ցուրտն ավելի սաստկացավ: Երեկոյան դեմ ցուրտը թրատում էր նրա մարմինը, երբ զգաց, որ թմրել է, ու ցրիվ մտքերն այլևս չկան: Ճգնում էր ըմբռնել՝ որտեղ է, թեև այլևս անկարող էր շարժել ձեռքերն ու ոտքերը:

... Երազ տեսավ, ու երազում թիթեռնաթև մի շշուկ արթնացրեց նրան, ու մոգական մի ուժ ստիպեց կանգնել, ստիպեց վերցնել ջութակն ու նվագել կրկին: Աղեղը հասավ ցրտահար լարերին, ու մեղեդին պոկեց արմատները ջութակից, պոկեց ուժգին ու դարձավ թիթեռ, ու թիթեռը յոթ գույն ուներ, ու մեղեդին բռնկվեց յոթ գույներով, ու թիթեռն իր յոթ գույներով ջերմացրեց աղջկան, ու յոթնաթերթ զգեստ կարեց նրա համար ու յոթնաթել մետաքսե մաշիկներ հագցրեց նրան ու պարուրեց նրան իր ծիածանով ու տարավ իրենց ամպ-ձիերը մտրակող թուխպերից էլ այն կողմ, յոթ սարերից ու յոթ ձորերից էլ այն կողմ, դեպի տիեզերք, ուր զանգակածաղիկների նուրբ առէջներից ծնվում են միայն աստղերի ու մանուկների հոգիները:

Այդ երեկո տիեզերքում վառվեց թիթեռնագույն մի աստղ, այդ երեկո թիթեռնագույն աստղը դարձավ աղջկա տունը: Նրա հոգին դադարեց այլևս թափառել ջութակից պոկված մեղեդու հետ ու ջերմություն որոնել մարդկանց անապատում:

Այդ երեկո նոյեմբերը չէր ուզում օրացույցից պոկել վերջին թերթիկը:

Նաիրա Համբարձումյան